եւ արար ժողով մեծ. եւ կոչել 'ի ժողով անդր զՀամայն միաբանս Ս. Յակոբայ և զժողովուրդս Հայոց բնակեալ յԵրուսաղէմ, և ընթերցաւ առաջի ամենեցուն զհրովարտակն Արքայի. ապա եհարց ցմիաբանս Հայոց, թէ արդարեւ այդպէ՞ս իցէ Մինաս վարդապետն, որպէս լուայք այժմ 'ի բանից հրովարտակին։ Նոքա ետուն պատասխանի, Մինաս վարդապետ լեալ միաբան 'ի վանս մեր 'ի 10 ամաց հետէ, վարեալ է զպաշտօն փոխանորդութեան և զիշխանութիւն Պատրիարքութեան, զտուրս ողորմութեան ուխտաւորաց և զնուէրս ազգին՝ զոր ժողովեաց 'ի ժամանակս իշխանութեան իւրոյ, ծախեաց 'ի կարեւոր պէտս շինութեան եւ նորոգութեան վանօրէից և եկեղեցեաց մերոց, և խնամ կալաւ աղքատաց և տնանկաց եղելոց այսր, և ոչ վատնեաց նա զինչս ազգին 'ի կամս իւր, մինչ չհոգալ ըստ կարեւոր պէտս անձին իւրոյ, և հաւատարմութեամբ ծառայեալ անթերի կատարեաց զամենայն գործս վանաց, և ոչ երբէք հակամիտեալ է նորա 'ի Լատին կրօնս։ Ուստի մեք ամենեքեան յատենի բազմութեան ժողովոյս յայտ առնեմք զգոհունակութիւն սրտից մերոց զնմանէ։ Եւ դատաւորն ըստ պատմութեան նոցին գրեալ յայտ արար 'ի Դուռն. եւ թէ որպէս վճարեաց զգործն քննութեան 'ի բազմամբոխ ժողովի անդ։ ՌՌՀ (1702)։

ԳԼՈՒԽ ԾԳ.

Վէճ աղաղակաց։ Կազմաւորումն վանաց Ս. Փրկչի. և ապանումն Ամիրանաց։ Պատրիարքութիւն Մինաս վարդապետի եւ վախճան նորին։ Հակառակութիւն Լատինաց։ Վէճ 'ի դերեզմանի Ս. Աստուածածնի։ Հակառակութիւն աղաղակաց։

Այլ մինչդեռ Աւետիք և արք իւր յուզեալ զայսպիսի անօգուտ խնդիրս՝ մաքառէին ընդ Մինասայ և ընդ միաբանս վանաց, և զբաղեալ էին 'ի կռիւս եւ 'ի վէճս իւրեանց, յարեան ոմանք յայլազգեաց Երուսաղէմի, որք էին վերատեսուչք Սալահէդդինի. և գնացեալ առ դա-